ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2017-2019թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ)









2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 3,513.4 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.92%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.13%-ով,
2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3,278.68 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 6.36%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 9.71%-ով,
3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 234.73 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 11.79%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերիի 31-ի նկատմամբ՝ 19.4%-ով,
4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 7,324.17 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5.81%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.11%-ով,
5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6,834.85 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.26%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.72%-ով,
6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 489.32 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 11.04%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 18.66%-ով,
7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2,542.61 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5.41%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.33%-ով,
8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 736.07 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 9.77%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 18.82%-ով,
9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 234.73 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 11.79%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերիի 31-ի նկատմամբ՝ 19.4%-ով,
10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5,300.41 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018 թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.3%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.32%-ով,
11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 1,534.44 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018 թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.7%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 19.91%-ով,
12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 489.32 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 11.04%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 18.66%-ով,

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4,309.61 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 4.11%-ով, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.18%-ով:
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝
1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 75.12%, ինչը 2018թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2017թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 1.84 և 3.65 տոկոսային կետով:
2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 24.41%, ինչը 2018թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2017թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 1.91 և 3.78 տոկոսային կետով:
3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.48%, ինչը 2018թ. դեկտեմբերի 31-ի և 2017թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.07 և 0.14 տոկոսային կետով:

2019թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝
1) տոկոսավճարները կազմել են 157.49 մլրդ. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 18.51 և 35.38 մլրդ դրամով:
2) ներքին տոկոսավճարները կազմել են 69.74 մլրդ. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 5.75 և 11.56 մլրդ դրամով:
3) արտաքին տոկոսավճարները կազմել են 87.75 մլրդ. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 12.76 և 23.82 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին, մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին, մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2019թ. հունվար-դեկտեմբերին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 234.66 մլրդ. դրամ, ինչը 2018թ. համեմատությամբ ավել է 101.55 մլրդ դրամով, իսկ 2017թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 44.56 մլրդ դրամով:

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 101.95 մլրդ. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 53.97 և 56.23 մլրդ դրամով:

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 132.71 մլրդ. դրամ, ինչը 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է 47.58 մլրդ դրամով, իսկ 2017թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 100.29 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2019թ. հունվար-դեկտեմբերին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 102.06 մլն. դոլար տոկոսավճար, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 14.63%-ով և 48.57%-ով:

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 168.21 մլն դոլարի մայր գումար, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 18.66%-ով և 67.39%-ով:

3) ստացվել են 359.24 մլն. դոլարի վարկային միջոցներ, ինչը 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է 12.49%-ով, իսկ 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է 38.55%-ով:

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 270.28 մլն. դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 17.1%-ով և 59.75%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման



2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 681.05 մլրդ դրամ, ինչը 2018թ. դեկտեմբերի 31-ի և 2017թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 92.94 և 131.32 մլրդ. դրամով:

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3734 օր, ինչը 426 օրով ավել է 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ, և 947 օրով ավել է 2017 թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4.82%, ինչը 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.17 և 0.07 տոկոսային կետերով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 0.74%, ինչը 2018 թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.23 և 0.04 տոկոսային կետերով:

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 6.86%, ինչը 2018 թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.77 և 1.3 տոկոսային կետերով:

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 92.4%, ինչը 2018 թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 0.99 և 1.34 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2019-2021ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2019-2021թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 9.11 տարի: Այս ցուցանիշը 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշներից ավել է համապատասխանաբար՝ 0.42 և 0.12 տարով,

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 12.66%, որը 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակից պակաս է համապատասխանաբար՝ 0.28 և 3.72 տոկոսային կետով,

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.84%, լողացող տոկոսադրույքով՝ 16.16%: Ընդ որում, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2018 թվականի և 2017 թվականի համապատասխան ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար՝ 1.14 և 2.68 տոկոսային կետերով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 20%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 77.55%, ներքին պարտք՝ 22.45%: Ընդ որում, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2018 թվականի և 2017 թվականի համապատասխան ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 0.7 և 1.72 տոկոսային կետերով: